ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2026 թվականի N 1257-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 7 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԼԻՏԱ ՍԵԴՐԱԿԻ ՍԵՆԵՔԵՐԻՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, նկատի ունենալով, որ ընդհանուր հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը և Մելիտա Սեդրակի Սենեքերիմյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Խ. Աբովյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 բնակելի տուն հասցեում գտնվող Մելիտա Սեդրակի Սենեքերիմյանին (ծնված՝ 00.00.1941 թվականին) շինությունների և սպասարկման համար անհրաժեշտ 05-003-0409-0010 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,096 հա մակերեսով հողամասի և դրա վրա օրինական կառուցված 7.20 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1976 թվականին), 171.12 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1976 թվականին), 2.02 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի (կառուցված՝ 1976 թվականին), 86.02 քմ մակերեսով հացատան, մառանի, գոմի, ավտոտնակի (կառուցված՝ 1976 թվականին) և 31.0 քմ մակերեսով բաղնիք խորդանոցի (կառուցված՝ 1980 թվականին) սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,08 հա, փաստացի օգտագործում է 0,096 հա):
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Խ. Աբովյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 բնակելի տուն հասցեն:
4. Տնամերձ հողամասի հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,016 հա մակերեսով հողամասը ճանաչել որոշման 1-ին կետում նշված անձի սեփականությունը:
5. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2026 թվականի N 1258-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-036-0033-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 05-036-0033-0044 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 1-ին փողոց, թիվ 21 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 26

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1259-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0119-0815 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հովիկ Հրաչիկի Սամվելյանի լիազոր անձ Անդրանիկ Համլետի Մովսիսյանի՝ խոտհարքից հրաժարվելու մասին դիմումը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ № 19102026-05-0088 տրված՝ 2004 թվականի նոյեմբերի 1-ին)՝ ***որոշում եմ.***

1. Հովիկ Հրաչիկի Սամվելյանին (ծնված՝ 18.05.1966 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-003-0119-0815 կադաստրային ծածկագրով 0,032 հա մակերեսով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարին՝ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականը ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1260-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-084-0116-0245 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վարդաձոր բնակավայրի բնակիչներ Ֆերդինանտ, Էլինա, Ագնեսիա Պողոսյանների՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասից (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ № 22062026-05-0068 տրված՝ 2026 թվականի հունիսի 22-ին) հրաժարվելու մասին դիմումը՝

որոշում եմ.

1. Ֆերդինանտ Գրիգորի Պողոսյանին (ծնված՝ 10.10.1960 թվականին), Էլինա Գրիգորի Պողոսյանին (ծնված՝ 01.03.1959 թվականին), Ագնեսիա Գրիգորի Պողոսյանին (ծնված՝ 20.05.1965 թվականին) իրենց սեփականության իրավունքով պատկանող 05-084-0116-0245 կադաստրային ծածկագրով 0,2046 հա մակերեսով վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարին՝ հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականը ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1261-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0518-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Աիդա Պարգևի Ամիրխանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Ա. Մյասնիկյան փողոց, թիվ 20/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0518-0033 կադաստրային ծածկագրով 0,00154 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 15.40 քմ արտաքին և 12.68 քմ ներքին մակերեսով ավտոտնակը (կառուցված՝ 1985 թվականին) ճանաչել օրինական որպես Մարտունի համայնքի սեփականություն:

2. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը:
3. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 20267AWVMP):
4. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Աիդա Պարգևի Ամիրխանյանին (ծնված՝ 10.11.1962 թվականին) օրինականացված կառույցը և 0,00154 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:
5. Հողամասին և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Ա. Մյասնիկյան փողոց, թիվ 20/2 հասցեն:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1262-Ա

ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՇԵՆՔ, ԹԻՎ 8/10 ՀԱՍՑԵԻ 86,78 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջով և հիմք ընդունելով Արտակ Մելքոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, 8-րդ շենք, թիվ 8/10 հասցեում՝ Արտակ Արտավազդի Մելքոնյանին (ծնված՝ 05.07.1984 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 86,78 քմ մակերեսով վարչական շենքի նպատակային նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ վարչական շենքից փոխել բնակարանի առանց նախագծային փոփոխությունների:
2. Արտակ Արտավազդի Մելքոնյանին՝ վճարել տեղական տուրք 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Արտակ Արտավազդի Մելքոնյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե կատարելու իրավունքների պետական գրանցում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի №1263-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 1141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Ռադիկ Անդրանիկի Սահակյանի 27.10.2026 թվականի №8572-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-7 թաղամասի 11-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող 05-039-0153-0017 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 1141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

   1) որոշման 1-ին կետի «7.26 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2010 թվականին)» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև բնակելի տան հիմնական պատերին ինքնակամ բացված 2 դռները և 1 պատուհանը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետի «պարիսպի համար՝ 7.26x6000x0.1028=4478 (չորս հազար չորս հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ.)» բառերից հետո լրացնել «ինքնակամ բացված 2 դռների և 1 պատուհանի համար՝ 3x10000x0.1028=3084 (երեք հազար ութսունչորս) ՀՀ դրամ.» բառերով.

   3) որոշման 2-րդ կետի «273005 (երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ)» բառերը փոխարինել «276089 (երկու հարյուր յոթանասունվեց հազար ութսունինը» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1264-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-036-0056-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 05-036-0056-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 3-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 1 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի №1265-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ ԴԵՄԵՐ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0042-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Վարդան Բալաբեկի Եղիազարյանի 24.09.2026 թվականի №7720-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 4-րդ փողոց, թիվ 25 հասցեում գտնվող, Վարդան Բալաբեկի Եղիազարյանին (ծնված՝ 25.09.1976 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-066-0042-0009

կադաստրային ծածկագրով 0.15083 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 19.47 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 12.42 քմ, կառուցված՝ 2011 թվականին), 144.96 քմ ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակ-գոմ-հացատունը (ներքին մակերեսը՝ 55.17+57.23=112.4 քմ, կառուցված՝ 2016 թվականին) և 3.9 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2012 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան համար՝ 19.47x10000x0.1028=20015 (քսան հազար տասնհինգ) ՀՀ դրամ.

   ավտոտնակ-գոմ-հացատան համար՝ 144.96x6000x0.1028=89411 (ութսունինը հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ.

   պարիսպի համար՝ 3.9x6000x0.1028=2406 (երկու հազար չորս հարյուր վեց) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 111832 (հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026CE2S2J):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.00083 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.15083 հա, գրանցված մակերեսը՝ 0.15 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձի սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 25 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի №1266-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-045-0010-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Շոթա Կամոյի Պողոսյանի 10.08.2026 թվականի №8328-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 42 հասցեում գտնվող, Կամո Շոթայի Պողոսյանին (ծնված՝ 03.08.1961 թվականին), Արմենուհի Ժորայի Պողոսյանին (ծնված՝ 10.09.1966 թվականին), Կամո Շոթայի Պողոսյանին (ծնված՝ 22.10.1983 թվականին), Ռիմա Շոթայի Պողոսյանին (ծնված՝ 01.01.1985

թվականին) և Հարություն Շոթայի Պողոսյանին (ծնված՝ 29.12.1990 թվականին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-045-0010-0022 կադաստրային ծածկագրով 0.2671 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 64.36 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 44.54 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 14.2 քմ արտաքին մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (ներքին մակերեսը՝ 13.66 քմ, կառուցված՝ 2018 թվականին), 8.55 քմ արտաքին մակերեսով ծածկը (ներքին մակերեսը՝ 8.2 քմ, կառուցված՝ 2018 թվականին) և 6.92 քմ մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2018 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան համար՝ 64.36x10000x0.1028=66162 (վաթսունվեց հազար հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 14.2x10000x0.1028=14598 (տասնչորս հազար հինգ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ.

   ծածկի համար՝ 8.55x6000x0.1028=5274 (հինգ հազար երկու հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ.

   պարիսպի համար՝ 6.92x6000x0.1028=4268 (չորս հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 90302 (իննսուն հազար երեք հարյուր երկու) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2026EFPSLX):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.0001 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.2671 հա, գրանցված մակերեսը՝ 0.267 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 1-ին փողոց, թիվ 42 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1267-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ԵՐԵՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ԶԵՆՖԻՐԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ԱՆԻ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵՎ ՆԵԼԼԻ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը և Աշոտ, Զենֆիրա, Անի և Նելլի Սիմոնյանների դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 26 հասցեում գտնվող 05-034-0156-0005 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 0,26600 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ

ճանաչել Աշոտ Երեմի Սիմոնյանի (ծնված՝ 17.06.1964 թվականին), Ջենֆիրա Սերյոժայի Սիմոնյանի (ծնված՝ 05.12.1964 թվականին), Անի Աշոտի Սիմոնյանի (ծնված՝ 25.12.1986 թվականին) և Նելլի Աշոտի Սիմոնյանի (ծնված՝ 07.02.1988 թվականին) սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը՝ 0,52 հա, գրանցված ունի 0,254 հա տնամերձ հողամաս, որը գրանցման ներկայացված հողամասի հետ միասին կազմում է 0,52 հա):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 26 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի №1268-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-045-0107-0050 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Արթուր Գրիգորի Ալեքսանյանի 12.08.2026 թվականի №6586-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 6-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 12 հասցեում գտնվող, Արթուր Գրիգորի Ալեքսանյանին (ծնված՝ 04.05.1968 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-045-0107-0050 կադաստրային ծածկագրով 0.13642 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի

վրա ինքնակամ կառուցված 68.1 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկուղային հարկը (ներքին մակերեսը՝ 50.3 քմ, կառուցված՝ 2020 թվականին), 180.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տուն 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 140.1 քմ, կառուցված՝ 2020 թվականին), 5.1 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2020 թվականին), 180.8 քմ արտաքին մակերեսով բնակելի տան տանիքային հարկը (ներքին մակերեսը՝ 158.2 քմ, կառուցված՝ 2020 թվականին) և 48.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 35.7 քմ, կառուցված՝ 2020 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝
   բնակելի տան նկուղային հարկի համար՝ 68.1x10000x0.1028=70007 (յոթանասուն հազար յոթ) ՀՀ դրամ.
   բնակելի տան 1-ին հարկի համար՝ 180.8x10000x0.1028=185862 (հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ.
   բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 5.1x10000x0.1028=5243 (հինգ հազար երկու հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ.
   բնակելի տան տանիքային հարկի համար՝ 180.8x10000x0.1028=185862 (հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ.
   ավտոտնակի համար՝ 48.8x6000x0.1028=30100 (երեսուն հազար հարյուր) ՀՀ դրամ.
   ընդամենը՝ 477074 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար յոթանասունչորս) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2023HYDNNK):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 6-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 12 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1269-Ա

ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 7 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ 05-003-0402-0010-002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 37.6 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՑԱՏԱՆ ԵՎ 05-003-0402-0010-003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 75.66 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջով և հիմք ընդունելով Սամվել Ժորժիկի Բաղդասարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաք Մարտունի, Ե. Չարենցի փողոց, թիվ 7 բնակելի տուն հասցեում Սամվել Ժորժիկի Բաղդասարյանին, Սուսաննա Սուրիկի Զոհրաբյանին, Արամ Սամվելի Բաղդասարյանին և Կարինե Սամվելի Բաղդասարյանին իրենց սեփականության իրավունքով պատկանող 05-003-0402-0010-002 կադաստրային ծածկագրով 37.6 քմ մակերեսով հացատան և 05-003-0402-0010-003 կադաստրային ծածկագրով 75.66 քմ մակերեսով ավտոտնակի նպատակային նշանակությունը բնակելիից փոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը հացատնից և ավտոտնակից փոխել խանութի առանց նախագծային փոփոխությունների:
2. Սամվել Ժորժիկի Բաղդասարյանին՝ վճարել տեղական տուրք 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սամվել Ժորժիկի Բաղդասարյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե կատարելու իրավունքների պետական գրանցում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1270-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻՑ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԲԱԶԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 166-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի մշակույթի կենտրոնի շենքի տանիքից բջջային կապի բազային կայան տեղադրելու նպատակով «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հատկացնել տարածք:
2. Վարձավճարի չափը սահմանել տարեկան 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1271-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 1217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 20 հողամաս հասցեում գտնվող 05-045-0055-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 1217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նկարագրական մասում «2005» թիվը փոխարինել «2025» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1272-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0152-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող 05-066-0152-0008 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գուքերին տրամադրել հետևյալ հասցեները.
   0,08707 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամասի 6-րդ փողոց, թիվ 1/1 հողամաս հասցեն,
   0,03653 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամասի 6-րդ փողոց, թիվ 1 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1273-Ա

«ՖԻՆՔԱ » ՈՒՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 20-ի N 8420-S)՝ ***որոշում եմ.***

1. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 8 հասցեում գործող վարկային կազմակերպությունում 7,6 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2026 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար (թույլտվությունը կցվում է):
2. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրինությանը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 17100 (տասնյոթ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1274-Ա

«ՄԱՆՎԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 45-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Մանվել Գաբրիելյան Արամայիսի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 20-ի N-8399-S)՝

որոշում եմ.

1. «Մանվել Գաբրիելյան Արամայիսի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, 45-րդ փողոց, թիվ 25 հասցեում գործող 38 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 4-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Մանվել Գաբրիելյան Արամայիսի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1275-Ա

«ՕՀԱՆՅԱՆ ՕԼԳԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Օհանյան Օլգա Անդրանիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հեկտեմբերի 16-ի N 8325-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Օհանյան Օլգա Անդրանիկի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան փողոց, թիվ 30 հասցեում 1,92 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2026 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Օհանյան Օլգա Անդրանիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 4320 (չորս հազար երեք հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1276-Ա

«ԱՆԳԻՆ ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱԹԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 8-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Անգին Մինասյան Սմբաթի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 16-ի N-8312-S)՝ ***որոշում եմ.***

1. «Անգին Մինասյան Սմբաթի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 8-րդ փողոց, թիվ 34 հասցեում գործող 25 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 4-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Անգին Մինասյան Սմբաթի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145115060 հաշվի համարին վճարել 6000 (վեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1277-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԶՈԼԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի №02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զոլաքարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1278-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-027-0218-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 18/1 հասցեում գտնվող 05-027-0218-0003 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.

   0,2050 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 18/2 հողամաս հասցեն,

   0,0550 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 18/1 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 1279-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա-2 ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 13 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-039-0032-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,15783 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2015 թվականի թիվ 412-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի հոկտեմբերի 22-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա-2 թաղամասի 2-րդ փողոց, թիվ 13 հասցեում գտնվող 05-039-0032-0009 կադաստրային ծածկագրով 0,15783 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 1280-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՆՐԻԿ ՀԱԿՈԲԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը և Հենրիկ, Սիրանուշ, Կարեն, Արմեն և Կարինե Վարդանյանների դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 10-րդ փողոց, թիվ 21 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հենրիկ Հակոբի Վարդանյանի (ծնված՝ 03.01.1955 թվականին), Սիրանուշ Մնացականի Վարդանյանի (ծնված՝ 02.08.1960 թվականին), Կարեն Հենրիկի Վարդանյանի (ծնված՝ 21.12.1984 թվականին), Արմեն Հենրիկի Վարդանյանի (ծնված՝ 09.10.1987 թվականին) և Կարինե Հենրիկի Վարդանյանի (ծնված՝ 26.04.1986 թվականին) շինությունների և սպասարկման համար անհրաժեշտ 05-060-0112-0017 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,26671 հա մակերեսով հողամասի և դրա վրա օրինական կառուցված 27.10 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1965 թվականին), 9.9 քմ մակերեսով նկուղի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի (կառուցված՝ 1965 թվականին), 103 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1965 թվականին), 32.70 քմ մակերեսով ավտոտնակի (կառուցված՝ 1988 թվականին) և 35.10 քմ մակերեսով անասնաշենքի (կառուցված՝ 1988 թվականին) սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,47 հա, գրանցված ունի 0,188 հա տնամերձ հողամաս):
2. Հողամասի վրա առկա են 336.5 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ՝ կառուցված 2018 թվականին:
3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
4. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 10-րդ փողոց, թիվ 21 հասցեն:
5. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 1281-Ա

ԱՐՏԱԿ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ՀՈՐԱՔՐՈՋ՝ ՎԻԿՏՈՐԻԱ ՄԱՔՍԻՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 29.10.2026 թվականի թիվ 17 արձանագրությունը և ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի օգոստոսի 25-ի N ԳԴ/0121/02/26 քաղաքացիական գործով կայացրած վճիռը Վիկտորիա Մաքսիմի Խաչատրյանին անգործունակ ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ Վիկտորիա Մաքսիմի Խաչատրյանը բնակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայր, 7-րդ փողոց, 9-րդ փակուղի, թիվ 9 հասցեում և հիմք ընդունելով Արտակ Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Արտակ Արմենի Խաչատրյանի խնդրանքը և նրան ճանաչել իր հորաքրոջ՝ Վիկտորիա Մաքսիմի Խաչատրյանի (ծնված՝ 12.03.1968 թվականին) խնամակալ, նրան իրավունք վերապահելով Վիկտորիա Մաքսիմի Խաչատրյանի անունից և նրա շահերից ելնելով կնքելու բոլոր անհրաժեշտ գործարքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 30
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 1282-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱՆՈՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Երանոսի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի նոյեմբերի 2-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Սվետլանա Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30
ք. Մարտունի